ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« ԶԱՐԳԱՑՈՂ ԳԱՂԱՓԱՐ» ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ ԻՆԿՈՒԲԱՏՈՐԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՈՒՅԹՆԵՐ

1.1 « Զարգացող գաղափար» ուսանողական բիզնես ինկուբատորը (այսուհետ՝ Բիզնես ինկուբատոր) համարվում է՝ Հյուսիսային համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) «Տնտեսագիտության կառավարման և ինֆորմատիկայի ֆակուլտետ»-ին (այսուհետ՝ Ֆակուլտետ) կից ոչ առևտրային գործունեություն իրականացնող սուբյեկտ, որի գործունեության իրավական հիմքերը սահմանվում է սույն կանոնադրությամբ:

1.2 Բիզնես ինկուբատորը իր հիմնական գործունեությունից շահույթ ստանալու նպատակ չի հետապնդում, սակայն իրավունք ունի մատուցելու վճարովի ծառայություններ և իրականացնելու ստեղծման նպատակներին համապատասխանող ձեռնարկատիրական գործունեություն:

1.3 Բիզնես ինկուբատորը կարող է ունենալ տարբերակիչ նշան, պաշտոնական էջ և Համալսարանի հովանու ներքո՝ զբաղվել սեփական գովազդով:

1.4 Բիզնես ինկուբատորի գործունեության շահառուներն են՝ ուսանողները, պրոֆեսորադասախոսական համակազմը, Համալսարանի վարչակազմը, գործատուները:

1.5 Բիզնես ինկուբատորի անվանումն է՝

1.5.1 հայերեն՝ «Զարգացող գաղափար» ուսանողական բիզնես ինկուբատոր

1.5.2 ռուսերեն՝ Студенческий бизнес-инкубатор «Развивающая идея»

1.5.3 անգլերեն՝ "Progressing Idea" student business incubator

1.6 Բիզնես ինկուբատորի գտնվելու վայրն է՝ ք.Երևան, Ալեք Մանուկյան 15ա:

2. ԲԻԶՆԵՍ ԻՆԿՈՒԲԱՏՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

2.1 Բիզնես ինկուբատորի գործունեության հիմնական նպատակն է՝ հավաքագրել նորարարական գաղափարներ և դրանք գեներացնել համալսարանական ներուժով: Բիզնես ինկուբատորի գործունեությունը նպատակաուղղված է նոր բիզնես գաղափարների գեներացմանը, Ֆակուլտետի ուսանողների մոտ գործնական հմտությունների և կարողությունների ձևավորման աջակցմանը, հետազոտական բաղադրիչով ուսումնառության կազմակերպմանը և ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին համապատասխան՝ «ստեղծարար» շրջանավարտների պատրաստմանը:

2.2 Բիզնես ինկուբատորի առանցքային խնդիրներն են՝

2.2.1 բիզնես տեսական գիտելիքների տեղափոխումը կիրառական հարթակ, որը ուսանողներին հնարավորություն կնձեռի ձեռք բերել կիրառական հմտություններ և աշխատանքային փորձ.

2.2.2աշխատաշուկայի մասնագիտական կրթական ժամանակակից պահանջների տեղայնացում՝ Համալսարանում իրականացվող համապատասխան ՄԿԾ-ում.

2.2.3 գաղափարների ինկուբացիա և փոխանցում կիրառական ձեռնարկատիրության ոլորտ.
2.3 Բիզնես ինկուբատորի գործառույթների շրջանակը.

2.3.1 նորարական բիզնես գաղափարների հավաքագրման մրցույթի կազմակերպում.

2.3.2 լավագույն գաղափարների ընտրության կազմակերպում.

2.3.3 ընտրված գաղափարների բաշխում ինկուբացիոն խմբերի միջև.

2.3.4 գաղափարների գեներացման գործընթացի ճանապարհային քարտեզի մշակում.

2.3.5 ինկուբացիոն արդյունքների ներկայացում՝ շահառուներին։

3. ԲԻԶՆԵՍ ԻՆԿՈՒԲԱՏՈՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

3.1 Բիզնես ինկուբատորին վերագրված իրավասություններ.
3.1.1 բիզնես ինկուբատորի անձնակազմի հավաքագրում և ինկուբացիոն խմբերի ստեղծում.
3.1.2 սկսնակ բիզնեսի զարգացման պայմաններին աջակցում.
3.1.3 բիզնես նախագծերի մշակման ծառայությունների մատուցում.
3.1.4 բիզնես միջավայրում խորհրդատվական ծառայության մատուցում.
3.1.5 մարքեթինգային, սոցիոլոգիական և սոցիալ-տնտեսական հետազոտական ծառայությունների մատուցում:
3.2 Բիզնես ինկուբատորի պատասխանատվության շրջանակ.

3.2.1 բիզնես ինկուբատորը իր գործունեության արդյունքներով հաշվետու է շահառուներին.

3.2.2 բիզնես ինկուբատորը հետևողական է ձեռներեցական էթիկային և առևտրային գաղտնիքի պահպանմանը.

3.2.3 բիզնես ինկուբատորը պատասխանատու է իրեն հատկացված ռեսուրսների նպատակային օգտագործման համար։

3. ԲԻԶՆԵՍ ԻՆԿՈՒԲԱՏՈՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1 Բիզնես ինկուբատորի կառավարումն իրականացվում է սույն կանոնադրությանը համապատասխան:
3.2 Բիզնես ինկուբատորի կառավարման մարմիններն են՝

ա/ կառավարման խորհուրդը, որի կազմը և նախագահը ընտրվում է ինկուբատորի անդամների կողմից.

բ/ ինկուբատորի գործադիր տնօրենը, ով համակարգում է ինկուբատորի գործառույթները.

բ/ գործադիր տնօրենի տեղակալը, ով աջակցում է ինկուբատորի գործունեության համակարգմանը.

գ/ Ֆակուլտետի ուսանողներ:

3.3 Բիզնես ինկուբատորի կառավարման խորհրդի անդամները իրավունք ունեն՝

3.3.1 սույն կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել կազմակերպած աշխատաժողովներին, հանդես գալ առաջարկություններով, մասնակցել օրակարգային հարցերի քննարկմանը և քվեարկել որոշումներ ընդունելիս.

3.3.2 բիզնես ինկուբատորի կողմից մատուցված վճարովի ծառայություններից ստանալ եկամուտ.

3.3.3 տիրապետել Բիզնես ինկուբատորի գործունեության մասին տեղեկություններին և հաշվետվություններին:

3.4 Բիզնես ինկուբատորի անդամները պարտավոր են՝

3.4.1 սույն կանոնադրությամբ սահմանված կարգի համաձայն ստանձնել իրեն վերապահած իրավունքներն ու պարտավորությունները.

3.4.2 ապահովել աշխատանքային գործընթացի արդյունավետությունը.

3.4.3 սահմանված ժամկետում կատարել ստանձնած բոլոր հանձնարարականներն ու առաջադրանքները.

3.5 Բիզնես ինկուբատորի անդամների մասնակցությամբ աշխատաժողովները հրավիրվում է գործադիր տնօրենի կողմից՝ եռամսյակը մեկ անգամ: Արտահերթ ժողով կարող է տեղի ունենալ յուրաքանչյուր անդամի նախաձեռնությամբ:

4. ԲԻԶՆԵՍ ԻՆԿՈՒԲԱՏՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

4.1 Բիզնես ինկուբատորի գործունեության միջոցները ձևավորվում են Համալսարանի հովանավորությամբ և պատվիրատուների միջոցով, նաև՝ դրամաշնորհներով:

4.2 Բիզնես ինկուբատորի ֆինանսական հոսքերը կառավարվում են Համալսարանի կողմից:

Հաստատում եմ՝

Հյուսիսային համալսարանի

ռեկտոր՝ Մ.Մակիչյան

Ընդունվել է

Հյուսիսային համալսարանի

Տնտեսագիտության և կառավարման

ամբիոնի 2022 թվականի N նիստում

ամբիոնի վարիչ՝ Ա.Ճուղուրյան